

պայծառ Սամուէլ վարդապետին բանն, այսինքն՝
 թէ զկացութիւնն արդենական, թէ Սրբազան Փա-
 փին հետն կեօրիւշմիշ բլլալն, եւ թէ զփարթն, եւ
 զայլ պարագայս այսպիսիս որք պատկանին առ նա
 ծանուցես մեզ. զի սրտադիւր լիցուք: Մեր տկա-
 րութիւնն տակաւին ոչ ապաքինեցաւ բօլորովին ի
 մէջ. այլ դեռ եւս կրեմք զմնացորդն. գուցէ մա-
 քրափայլ աղօթիւք ձերովք բուժեսցի ի սպառ:
 Չեր միաբան վ. Հ. Կարապետ որդեակն մեր
 եկեալ եհաս աստ կարգեալ գուռաթ ի վերայ
 Հայոց ի Սրբոյ Ժողովոյն եւ այժմ նստի յեկեղե-
 ցին Հայոց, որոյ Տէր տացէ զկարողութիւն առ ի
 խոհեմապէս կառավարել. զի սակաւ ինչ խառնա-
 փնթ որ է կացութիւնն Հայոց որք են աստ. ի մէջ
 որոց իրակութեանց ոչ ներախառնեմ ես զիս
 բնաւ, եւ այժմ զոչ այլ ինչ գրելի եւ ծանուցա-
 նելի ունիմ վերապատուելութեանդ, այլ միայն
 խնդրել զաղօթս առ Աստուած վասն կատարեալ
 առողջութեան խօթացեալ եւ տառապեալ ան-
 ձինս՝ որոյդ եւս Տէր Յիսուս տացէ առողջութիւն
 հոգւոյ եւ մարմնոյ, մնալ քեզ ողջ ի շնորհս
 Տեառն, եւ ի պարծանս իմ

որ եմ անարժանագոյն ծառայ Տեառն
 Սարգիս վարդապետ եւ Արքեպիսկոպոս
 Կեսարիոյ: